ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2022 թվականի N 1846-Ա

«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԻՎ 5222-ԱՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլուխը և 605-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ֆինանսավորման թիվ 5222-ԱՄ համաձայնագրի (այսուհետ՝ վարկային համաձայնագիր) շրջանակներում ձեռք բերված բժշկական սարքավորում-

ներն ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը, այնուհետև անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնակչության բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Վարկային համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված բժշկական սարքավորումներն ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը, այնուհետև նվիրաբերել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնակչության բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններին՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Վարկային համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված բժշկական սարքավորումներն ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնակչության բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների հետ կնքել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված բժշկական սարքավորումների անհատույց օգտագործման և նվիրաբերության պայմանագրեր.

2) սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված բժշկական սարքավորումների նվիրաբերության պայմանագրում նախատեսել դրույթներ նվիրաբերված գույքը բացառապես բժշկական օգնության և սպասարկման նպատակներով օգտագործելու, դրանք տեխնիկական փաստաթղթերին համապատասխան շահագործելու, պահպանելու, սույն ենթակետում նշված պայմանները չպահպանելու դեպքում՝ նվիրաբերության վերացման հնարավորության մասին.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել որոշման նախագիծ՝ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված բժշկական սարքավորումները բաշխելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ